

## **ԵԱՀԿ գրասենյակը մտահոգված է Հայաստանում լրագրողների դեմ կատարվող բռնարարքների և սպառնալիքների կապակցությամբ**

ԵՐԵՎԱՆ, 12 սեպտեմբերի 2006 թ. - ԵԱՀԿ Երևանի գրասենյակը այսօր հանդես է եկել հետևյալ հայտարարությամբ.

«ԵԱՀԿ Երևանի գրասենյակը խորապես մտահոգված է Հայաստանում լրագրողների դեմ կատարվող բռնարարքների և սպառնալիքների վերջին դեպքերով, որոնք խոչընդոտում են նրանց մասնագիտական պարտականությունների կատարմանն ու սպառնում խոսքի ազատությանը:

Տեղեկությունների համաձայն՝ ս.թ. սեպտեմբերի 6-ին անհայտ անձինք հարձակվել և ծեծի են ենթարկել «Իրավունք» թերթի խմբագիր Հովհաննես Գալաջյանին՝ Երևանում տնից դուրս գալու ժամանակ: Հուլիսի 12-ին «Չորրորդ իշխանություն» և «Առավոտ» թերթերի արտահաստիքային լրագրող Գագիկ Շամշյանի վրա հարձակվել և սպառնացել են:

Գրասենյակը մեծապես կարևորում է այս դեպքերի պատշաճ հետաքննությունն ու մեղավորների պատժումը՝ օրենքի ողջ խստությամբ: Գրասենյակը կոչ է անում իրավապահ մարմիններին ձեռնարկելու համապատասխան միջոցառումներ լրատվության ոլորտի աշխատակիցների անվտանգությունն ապահովելու համար, ինչը կլիսթանի երկրում խոսքի ազատության իրավիճակը:

Գրասենյակը ողջունում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի, ՀՀ Նախագահի մամուլի քարտուղարի և հասարակական կազմակերպությունների հայտարարությունները, որոնք դատապարտում են լրագրողների դեմ կատարված բռնարարքները:

ԵԱՀԿ Երևանի գրասենյակը հանգամանորեն կհետևի հետագա զարգացումներին՝ կապված լրագրողների դեմ բռնարարքների այս դեպքերի հետ: